«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2 , հեռ. 060621238, 2-38 , ss@ysmu.am

## «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 14 ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամի կանոնադրության 55-րդ կետը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի գիտական խորհուրդը լսելով հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Գ.Ա.Ավետիսյանի՝ «ԵՊԲՀ հետբուհական և շարունակական կրթության 2016-2017 ուսումնական տարվա հաշվետվության արդյունքները, բարեփոխման ուղիները» թեմայով զեկուցումը, հաղորդումներն ու ելույթները,

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համալսարանի հետբուհական և շարունակական կրթության 2016-2017 ուսումնական տարվա աշխատանքները գնահատել բավարար (17-11-14-01):
2. Կլինիկական օրդինատուրա դիմողների գիտելիքների ստուգումն իրականացնել բանավոր և համակարգչային քննությունների ձևաչափով՝ համահավասարեցնելով ընդունելության պայմանները (17-11-14-02):
3. 2018 թվականի հունվար ամսից կլինիկական օրդինատուրայի ընդունելությունը կազմակերպել տարեկան երկու անգամ (17-11-14-03):
4. Մինչև 2018 թվականի հունիս ամիսն առողջապահական և բժշկական կրթական ոլորտներում մեծ պահանջարկ ունեցող մասնագիտությունների գծով մշակել համապատասխան քաղաքականություն՝ հայտերի ներկայացման և կրթական գործընթացի ապահովման վերաբերյալ (17-11-14-04):
5. ՀՀ ԱՆ հավաստագրման ազգային կենտրոնի և համալսարանի գիտական մասի հետ համատեղ մշակել շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտավորման պիլոտային մոդել՝ կատարելագործման դասընթացների և գիտական կոնֆերանսների ձևաչափերի միջոցով (17-11-14-05):
6. Ուսումնամեթոդական վարչության հետ շարունակել համանուն և/կամ միևնույն գործառույթներն իրականացնող ամբիոնների վերամիավորման գործընթացը (17-11-14-06):
7. Շարունակել հետբուհական և շարունակական կրթության կենտրոնի և համալսարանական կլինիկաների աշխատանքային համագործակցությունը՝ կլինիկական օրդինատորների ներգրավվածության ծավալների մեծացման նպատակով (17-11-14-07):
8. Հաստատել 2014 թվականի սեպտեմբերի 30-ի «Ուսման վճարի փոխհատուցման (զեղչերի) մասին» թիվ 1 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին գիտական խորհրդի որոշումը (17-11-14-08):
9. Հաստատել «Արխիվի կանոնակարգը» (17-11-14-09):
10. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր պրոֆ. Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝ Բ.Գ.Դ., ՊՐՈՖ.Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Բ.Գ.Դ.,ՊՐՈՖ.Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ